ԱՆՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ. ՀՈՒՅՍԵՐ ԵՎ ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.126

ԱՄՓՈՓՈՒՄ

Սևրի պայմանագիրը Առաջին աշխարհամարտի ավարտն վերաբերող վերսալյան համակարգի վերջին պայմանագիրն էր: Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի հիմքում դրվել էին մեծ տերությունների՝ Սան Ռեմոյի վեհաժողովի որոշումները, որոնք քննարկվեցին և հաստատվեցին Փարիզից ոչ հեռու Սևր փոքրիկ քաղաքում՝ 1920 թ. օգոստոսի 10-ին: Պայմանագիրը կնքվեց մի կողմից Թուրքիայի սուլթանական կառավարության, մյուս կողմից՝ գլխավոր դաշնակիցներ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Թուրքիայի դեմ պատերազմող մի շարք երկրների՝ Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Սերբա-խորվաթա-սլովակյան թագավորության (Հարավսլավիայի), Հեջազի միջև: Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրել է Ա. Ահարոնյանը: Միջազգային իրավունքի տեսակետից Հայաստանի Հանրապետությունը՝ որպես պայմանագրի մասնակից, դե յուրե (ըստ օրենքի) ճանաչվում էր պայմանագիր ստորագրած մյուս բոլոր պետությունների կողմից:

Պայմանագիրը բաղկացած էր 13 մասերից, որոնք բոլորը միասին պարունակում էին 433 հոդված: Այն Թուրքիային զրկում էր իր նախկին տարածքի 3/4 մասից, թուրքական տիրապետությունից ազատվում էին հայերը, արաբները, քրդերը և այլ ժողովուրդներ: Ըստ պայմանագրի, որպես մանդատային տարածք, Ազգերի լիգայի միջոցով Պաղեստինը և Իրաքը տրվում էին Անգլիային, Սիրիան և Լիբանանը՝ Ֆրանսիային: Թուրքիան հրաժարվում էր Արաբական թերակղզու և Հյուսիսային Աֆրիկայի նկատմամբ ամեն տեսակի հավակնություններից,

ճանաչում էին Անգլիայի պրոտեկտորատը Եգիպտոսի և Կիպրոսի նկատմամբ: Իտալիային էր անցնում Դոդենկանեզի կղզիները, Հունաստանին՝ Արևելյան Թրակիան՝ Էդիրնեյի հետ, Գալլիպոլի թերակղզին և Իզմիրը:

Նեղուցների գոտին ենթարկվում էր լրիվ ապառազմականացման և անցնում էր Անտանտի կողմից ստեղծված նեղուցների կառավարման միջազգային հանձնաժողով հսկողության տակ: Սևրի հաշտության պայմանագրի համաձայն՝ Թուրքիային մնում էին Կոստանդնուպոլիսը և շրջակայքը՝ բարեխիղճ կատարման պայմանով, իսկ Ասիական Թուրքիան սեղմվում էր մինչև Արևմտյան Անատոլիայի սահմանը: Վերականգնվում էր կապիտուլացիոն ռեժիմը, որով դաշնակից տերությունները իրավունք ունեին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Սևրի պայմանագիր, Մեծ տերություններ, Տարածքային պահանջներ, Քեմալական Թուրքիա, Հայաստանին վերաբերվող հոդվածներ, Վ. Վիլսոնի իրավարար վճիռ, Միջազգային իրավունք:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սևրի հաշտության պայամանագիրը վերջին հարյուրամյակների կտրվածքով թերևս ամենահայամետ փաստաթուղթն էր, որը կարող էր նպաստել Հայկական հարցի լուծմանը և հայկական պետականության համար ապահովել բավարար տարածք: Սակայն Սևրի հաշտության պայմանագիրը մնաց թղթի վրա: Այն չվավերացրեց նույնիսկ սուլթանական կառավարությունը: Միջազգային իրավունքի տեսանկյունից Սևրի պայմանագիրը չվավերացված, բայց միևնույն ժամանակ ոչ էլ ուժը կորցրած պայմանագիր է:

Իրավական տերմինաբանությամբ Սևրի պայմանագիրը թեև չի վավերացվել մասնակից երկրների կողմից, բայց նաև չի դենոնսացվել Լոզանի 1923թ. հուլիսի 23-ի պայմանագրով: Ավելին. իրավունքի տեսանկյունից ուժի մեջ է համարվում Սևրի պայմանագրի օրգանական մաս հանդիսացող Վուդրո Վիլսոնի 1920թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճիռը, որով սահմանվում են Հայաստանի սահմանները: Այսպիսով՝ այս երկու փաստաթղթերը Սևրի պայմանագիրը և

դրանից ածանցվող ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը Հայաստանի համար ունեն անկյունաքարային նշանակություն, և դրանց վրա պետք է խարսխվեն մեր ինչպես արտաքին, այնպես էլ իրավական քաղաքականությունները միջազգային հարաբերություններում: Սևրի պայմանագիրը թեև վավերացված չէ, այսուհանդերձ այն կատարման համար պարտադիր փաստաթուղթ է (binding document), քանի որ ստորագրվել է «բարձր պայմանավորվող կողմերի միջև»:

Պետք է արձանագրել, որ Սևրի պայմանագիրն ու դրանից ածանցվող այլ միջազգային փաստաթղթերն ունեն ոչ միայն ու ոչ այնքան պատմական, որքան նաև արդիական նշանակություն և համապատասխան աշխատանքի դեպքում կարող են կռվան հանդիսանալ միջազգային հարթակներում, այդ թվում և առաջին հերթին Թուրքիայի հետ հարաբերություններում Հայաստանի դիրքավորման համար: Իսկ դա նշանակում է, որ Սևրի պայմանագրի անգամ քննարկումը, այն օրակարգ բերելը միջազգային ասպարեզում կարող է դառնալ բավական գործնական լծակ Հայաստանի արտաքին քաղաքականության համար: Սևրի պայմանագիրը իրավապատմական նշանակություն ունեցող փաստաթուղթ է: Առավելապես մեզանից՝ Հայաստանից, հայկական ներուժից է կախված այն երբևէ կվերակենդանանա՞ որպես պայմանագիր, թե՞ կշարունակի մնալ պատմության գզրոցներում՝ սոսկ որպես հուշագիր:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սևրի պայմանագիրը ունի արդի նշանակություն Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգայնորեն ճանաչման առումով: Ըստ այդմ՝ հետազոտությունը կատարվել է պատմահամեմատական, վերլուծության և համադրման մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սևրի պայմանագիրը և Հայաստանին վերաբերվող հոդվածները

Սևրի պայմանագիրը Առաջին աշխարհամարտի ավարտին վերաբերող վերսալյան համակարգի վերջին պայմանագիրն էր: Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի հիմքում դրվել էին մեծ տերությունների՝ Սան Ռեմոյի վեհաժողովի որոշումները, որոնք քննարկվեցին և հաստատվեցին Փարիզից ոչ հեռու Սևր փոքրիկ քաղաքում՝ 1920 թ. օգոստոսի 10-ին: Պայմանագիրը կնքվեց մի կողմից՝ Թուրքիայի սուլթանական կառավարության, մյուս կողմից՝ գլխավոր դաշնակիցներ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Թուրքիայի դեմ պատերազմող մի շարք երկրների՝ Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Սերբա-խորվաթա-սլովակյան թագավորության (Հարավսլավիայի), Հեջազի միջև: Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրել է Ա. Ահարոնյանը: Միջազգային իրավունքի տեսակետից Հայաստանի Հանրապետությունը, որպես պայմանագրի մասնակից, դե յուրե (ըստ օրենքի) ճանաչվում էր պայմանագիր ստորագրած մյուս բոլոր պետությունների կողմից:

Պայմանագիրը բաղկացած էր 13 մասից, որոնք բոլորը միասին պարունակում էին 433 հոդված: Այն Թուրքիային զրկում էր իր նախկին տարածքի 3/4 մասից, թուրքական տիրապետությունից ազատվում էին հայերը, արաբները, քրդերը և այլ ժողովուրդներ: Ըստ պայմանագրի, որպես մանդատային տարածք, Ազգերի լիգայի միջոցով Պաղեստինը և Իրաքը տրվում էին Անգլիային, Սիրիան և Լիբանանը՝ Ֆրանսիային: Թուրքիան հրաժարվում էր Արաբական թերակղզու և Հյուսիսային Աֆրիկայի նկատմամբ ամեն տեսակի հավակնություններից, ճանաչում էին Անգլիայի պրոտեկտորատը Եգիպտոսի և Կիպրոսի նկատմամբ: Իտալիային էր անցնում Դոդենկանեզի կղզիները, Հունաստանին՝ Արևելյան Թրակիան՝ Էդիրնեյի հետ, Գալլիպոլի թերակղզին և Իզմիրը:

Նեղուցների գոտին ենթարկվում էր լրիվ ապառազմականացման և անցնում էր Անտանտի կողմից ստեղծված նեղուցների կառավարման միջազգային

հանձնաժողովի հսկողության տակ: Սևրի հաշտության պայմանագրի համաձայն՝ Թուրքիային մնում էին Կոստանդնուպոլիսը և շրջակայքը՝ բարեխիղճ կատարման պայմանով, իսկ Ասիական Թուրքիան սեղմվում էր մինչև Արևմտյան Անատոլիայի սահմանը: Վերականգնվում էր կապիտուլացիոն ռեժիմը, որով դաշնակից տերությունները իրավունք ունեին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին: Սահմանափակվում էր Թուրքիայի զինված ուժերը՝ 50 հազ. զինվոր և 35 հազ. ոստիկանություն **(Ключникова Ю., 1927):**

Սևրի պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժինը՝ 88-93-րդ հոդվածները ամբողջությամբ վերաբերում էին Հայաստանին: Մասամբ կամ անուղղակիորեն Հայաստանին կամ հայերին էին վերաբերում նաև 125, 142, 144, 277, 349, 351, 352-րդ հոդվածները: Հաշվի առնելով Սևրի պայմանագրի բացառիկ նշանակությունը որպես Հայ դատը հիմնականում լուծող փաստաթուղթ՝ Հայաստանին և հայությանը վերաբերող հոդվածները ներկայացնում ենք ամբողջությամբ **(Կիրակոսյան Ջ., 1972):**

Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն:

Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատումը թողնել ԱՄՆ-ի որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:

Հոդված 90. Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն՝ սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տերիտորիայի նկատմամբ բոլոր

իրավունքներից և իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տերիտորիաների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաև այդ տարածքի նկատմամբ:

Հայաստանի սուվերենությանը հանձնվող տարածքի կապակցությամբ նրա վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը, և դրանց բնույթն ու այն իրավունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կսահմանվեն սույն Պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 91. Եթե 89-րդ հոդվածում նշված տերիտորիայի մի մասը հանձնվի Հայաստանին, ապա Սահմանագծման հանձնաժողով, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

Հոդված 92. Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելուն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի և եթե դրանից հետո այս կամ այն շահագրգռված պետությունները չենք կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն Գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանազատումը տեղում գծանշելու մասին:

Հոդված 93. Հայաստանը ընդունում է՝ համաձայնվելով դրանք մտցնել Գլխավոր տերությունների հետ պայմանագրի մեջ այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզվի և կրոնի առումով տարբերվում են ազգաբնակչական մեծամասությունից: Հայաստանը նմանապես համաձայնվում է Գլխավոր տերությունների հետ Պայմանագրի մեջ մտցնել այն որոշումները, որոնք

այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն տրանզիտի ազատությունը և այլ ազգերի առևտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար:

Հոդված 125. Տասնութից բարձր տարիք ունեցող այն անձինք, որոնք սույն Պայմանագրի համապատասխան բնակություն են հաստատել Թուրքիայից անջատված տերիտորիայում, և որոնք ռասայի առումով տարբերվում են ազգաբնակչական մեծամասությունից, սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո միամյա ժամանակաշրջանում կարող են քաղաքացիություն ընդունեն հօգուտ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Հունաստանի, Հեջասի, Միջագետքի, Սիրիայի, Բուլղարիայի կամ Թուրքիայի, եթե այն պետության ազգաբնակչության մեծամասությունը, որի օգտին կատարվում է քաղաքացիության ընտրությունը, պատկանում է նույն ռասային, ինչ և քաղաքացիության ընտրության իրավունքը կենսագործող ազգը:

Հոդված 142. Նկատի առնելով, որ 1914 թվականի նոյեմբերի 1-ից հետո Թուրքիայում գոյություն ունեցող տեռորիստական ռեժիմի պատճառով չէին կարող նորմալ կարգով տեղի ունենալ քրիստոնյաների դավանափոխություններ, այդ ամսաթվից հետո կատարված դավանափոխությունները չեն ընդունվում, և այն բոլոր անձինք, որոնք մինչև 1914 թվականի նոյեմբերի 1-ը չեն եղել մուսուլման, կդիտվեն որպես ոչ մուսուլմաններ, եթե միայն նրանք, վերականգնելով իրենց ազատությունը, իրենց սեփական կամքով չեն կատարի այն բոլոր ձևականությունները, որոնք անհրաժեշտ են իսլամն ընդունելու համար:

Սևրի պայմանագրի հետևանքները

Նույն օրը չորս Գլխավոր դաշնակիցները Սևրում առանձին հատուկ պայմանագիր կնքեցին ՀՀ-ի հետ, որը ստորագրեցին Ա. Ահարոնյանը և Պ. Նուբարը: Դրանով դաշնակիցները կանոնարկում էին իրենց պահանջները Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ընդհուպ ընտրական համակարգի մշակումը **(Կարապետյան Մ., 2003):** Սևրի պամանագիրը կարող էր ուժի մեջ մտնել միայն այն դեպքում, եթե նախ վավերացվեր մի կողմից՝ Թուրքիայի, մյուս կողմից՝ Ֆրանսիայի, Իտալիայի կամ էլ սրանցից մեկի փոխարեն Ճապոնիայի

կողմից: Մինչև այդ ակտը տեղի չունենար, դաշնակից մյուս պետությունների, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից պայմանագրի վավերացումը չէր կարող լինել: Պայմանագիր ուժի մեջ մտնելու այդ խրթին գործընթացը մեծապես նպաստեց Թուրքիայի կողմից նրա վավերացումը ձգձգելուն և ի վերջո չվավերացնելուն **(Սահակյան Տ., 2007):**

Սևրի պայմանագրի մշակման խնդրում վճռական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ Թուրքիայում փաստական իշխանությունն իրենց ձեռքը վերցրած քեմալականները դաշինքի մեջ էին մտել Խորհրդային Ռուսաստանի հետ, ուստի Սևրի պայմանագրի հետապնդած նպատակներից մեկը քեմալականների վրա ճնշում գործադրելն ու Խորհրդային Ռուսաստանին հակադրելն էր: Անկախ Հայաստանի ստեղծումը մի կողմից՝ կթուլացներ քեմալական Թուրքիայի դիրքերը, իսկ մյուս կողմից՝ հուսալի պատնեշ կլիներ Խորհրդային Ռուսաստանի և նոր Թուրքիայի միջև **(Գալոյան Գ., 1999):**

Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները կարծես թե իրականություն էին դարձնում Արևմտյան Հայաստանի ազատագրումը, որը Արևելյան Հայաստանի հետ միասին կազմելու էր Միացյալ և Անկախ Հայաստան: Սևրի պայմանագիրը Արևմտյան հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչումն էր, անկախ այն հանգամանքից որ պայմանագիրը կյանքի չկոչվեց **(Գալոյան Գ., 1999):**

Ըստ ակադեմիկոս Գ. Գալոյանի՝ «Սևրի պայմանագրի ձգձգումը բացասական հետևանք ունեցավ, քանի որ թուրքերին հնարավորություն տվեց ոտքի կանգնելու և դաշնակիցների հետ ուժի դիրքերից խոսելու: Եվ այն հանգամանքը, որ այդ ընթացքում Թուրքիայում իսկական իշխանությունը իրենց ձեռքն էին վերցրել քեմալականները, Սևրի պայմանագիրը դարձնում էր անհնարին»: Նա գտնում էր նաև, որ Սևրի պայմանանգիրը ստորագրած խոշոր տերություններից և ոչ մեկը չի հավատացել, որ Հայաստանին վերաբերող նրա հոդվածները կարող են իրականանալ, քանզի նրանց բոլորին հայտնի էր որ Մ. Քեմալն արդեն զենքի տակ ուներ 150 հազ. լավ զինված և կարգապահ բանակ,

որի դեմ եվրոպական դաշնակիցներից և ոչ մեկը զենք գործադրելու մտադրություն չուներ: Դրանով Սևրի պայմանագիրը մարտահրավեր էր Թուրքիային և անխուսափելի էր դարձնում հայ-թուրքական պատերազմը **(Գալոյան Գ., 1999):**

Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանին, որը դեռ 1917 թ. դեկտեմբերն «Թուրքահայաստանի» մասին դեկրետով էր ճանաչել Արևմտյան Հայաստանի ազգային ինքնորոշման իրավունքը, ընդհուպ ազգային պետություն ստեղծելը, չէր ցանկանում, որ հայերը իրենց անկախությունը ստանան Անտանտի տերություններից և դրանով իսկ ընդմիշտ կախված լինեն նրանցից: Այդ Հայաստանը կխանգարեր «համաշխարհային հեղափոխության» ալիքի տարածումը Արևելքում և Խորհրդային Ռուսաստանին ու «հեղափոխական» Թուրքիային կբաժաներ իրարից **(Գալոյան Գ., 1999):**

Դաշնակից տերությունները Սևրի պայմանագիրը կնքել էին Թուրքիայի սուլթանական կառավարության հետ, սակայն Սևրի հաշտության պայմանագիրը մնաց թղթի վրա: Այն չվավերացրեց նույնիսկ սուլթանական կառավարությունը: Դաշնակից պետությունները չկարողացան ստիպել քեմալական Թուրքիային ճանաչելու այդ պայմանագիրը: 1920թ. օգոստոսի 14-ին Մ. Քեմալը հրաժարվեց ընդունել Սևրի պայմանագիրը և հայտարարեց որ պատրաստվում է գրավել Կարսը, Սարիղամիշը, Արդահանը, Բաթումը, որոնք, ըստ Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի, պատկանում են Թուրքիային ու քայլեր ձեռնարկել կանխելու հայերի հնարավոր հարձակումը Էրզրումի վրա **(Ататюрк К., 1966):**

Սևրի պայմանագիրը ստորագրվեց Փարիզի կոնֆերանսի հրավիրումից ավելի քան մեկուկես տարի անց, այդ ընթացքում քաղաքական ուժերի վերադասավորումն ընթացավ Թուրքիայի օգտին և վերջինս սկսեց ուժի դիրքերից խոսել դաշնակիցների հետ: Այդ ընթացքում Անտանտի տերությունների հակաթուրքական դիրքորոշումը փոխարինվեց Մ. Քեմալի հետ համաձայնության գալու և նրան Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղելու քաղաքականությամբ:

Դրանով Եվրոպան հրաժարվում էր Թուրքիան մասնատելու ծրագրերից և արդեն ստորագրած Սևրի պայմանագրից **(Գալոյան Գ., 1999):**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մոտ 100 տարի առաջ Թուրքիայի սուլթանական կառավարության և Անտանտի երկրների միջև կնքվեց պայմանագիր, որում կար անդրադարձ Հայկական հարցին: Թուրքիան ճանաչում էր Հայաստանի անկախությունը: Ըստ այդ պայմանագրի՝առաջարկում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնին՝ գծելու ապագա անկախ Հայաստանի սահմանները: Այդ սահմանները պետք է անցնեին Էրզրումի, Վանի, Բիթլիսիի, Տրապիզոնի շրջանակներում:

Վուդրո Վիլսոնն ընդունեց սահմանների վերաբերյալ արբիտրաժային վճիռը սակայն բավական ուշ՝ 1920թ.-ի նոյեմբերի 22-ին: Հետո Սևրի պայմանագիրը, ըստ էության, չիրականացավ: Բայց մի բան փաստ էր, որ Բագրատունյաց Հայաստանի ցավալի կործանումից 875 տարի հետո, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի թագավորության անկումից 545 տարի հետո միջազգայնորեն ընդունվեց, ճանաչվեց հայ ժողովրդի իրավունքն իր պատմական հողերի վրա՝ Հայկական լեռնաշխարհում վերաստեղծելու անկախ պետությունը:

Սա մի երևույթ էր, որն անանց արժեք ունի, որովհետև ճանաչվեց հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքն իր իսկ պատմական տարածքում, և սա շատ հուսադրող փաստ էր Հայկական հարցի լուծման համար, բայց պայմանագրի դրույթները չիրագործվեցին: Այս խնդիրը միշտ մեր գիտական և պատմագիտական մտքի կենտրոնում է եղել: Շատ հետազոտություններ, գրքեր և հոդվածներ են նվիրվել այդ խնդրին, և այսօր՝ 100 տարի անց, տարիների հեռվից փորձ է արվում դիտարկելու Սևրի պայմանագրի փիլիսոփայությունը, և թե ինչ պատճառներով այն հնարավոր չեղավ իրագործել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գալոյան Գ. (1999),** Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
2. **Կարապետյան Մ. (2003),** Հայաստանը 1912-1920 թվականներին, Երևան, «Զանգակ-97» հրատ.:
3. **Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ. (1972),** Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, «Հայաստան» հրատ.:
4. **Սահակյան Տ. (2007),** Ցավալի պայմանագրեր, Երևան, «Լուսական» հրատ.:
5. **Ататюрк К. (1966),** Избранные речи и выступления, Москва, «Прогресс».
6. **Ключникова Ю., Сабанина А. (1927),** Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, Москва, Литиздат НКИД.

REFERENCES

1. **Galoyan G. (1999),** Haystany' ev Mec' terowt'yownnery' 1917-1923t't' /Armenia and the Great Powers 1917-1923/, Yerevan, RA NAS "Science".
2. **Karapetyan M. (2003),** Hayastany' 1912-1920 t'vakannerin /Armenia in 1912-1920/, Yerevan, "Zangak-97" ed..
3. **Kirakosyan J., Sahakyan R. (1972),** Hayastany' mijazgayin divanagitowt'yan & sovetakan artaqin qaghaqakanowt'yan p'astat'ght'erowm (1828-1923) /Armenia in the Documents of International Diplomacy and Soviet Foreign Policy (1828-1923)/, Yerevan, "Armenia" ed..
4. **Sahakyan T. (2007),** Cavali paymanagrer /Painful Contracts/, Yerevan, "Lusakan".
5. **Ataturk K. (1966),** Izbrannyye rechi i vystupleniya /Selected speeches and appearances/, Moscow, Progress.
6. **Klyuchnikova Yu., Sabanina A. (1927),** Sevrskiy mirnyy dogovor i akty, podpisannyye v Lozanne /The Treaty of Sevres and the acts signed in Lausanne/, Moscow, Litizdat NKID.

Анна Мелконян

Севрский договор и судьба Армянского вопроса. надежды и разочарования

Заключение

Ключевые слова и выражения: *Севрский мирный договор, великие державы, территориальные претензии, Кемальская Турция, статьи об Армении, В. Арбитражное решение Вильсона, международное право.*

Около 100 лет назад между султанским правительством Турции и странами Антанты был подписан договор, в котором упоминался армянский вопрос. Турция признала независимость Армении. Согласно этому соглашению, президенту Соединённых Штатов Америки Вудро Вильсону было предложено провести границы будущей независимой Армении. Эти границы должны были пройти в пределах Эрзурума, Вана, Битлиси, Трабзона(Трапезу́нд). Однако Вудро Вильсон довольно поздно принял арбитражное решение о границах, 22 ноября 1920 года. Севрский договор , однако, так и не вступил в силу.

Но одно оставалось фактом. через 875 лет после болезненного падения Багратидской Армении, а также через 545 лет после падения Киликийского царства, право армянского народа на восстановление независимого государства на Армянском нагорье на международном уровне было признано недействительным. Это было явление, имеющее огромное значение, поскольку оно признавало право армянского народа на самоопределение на своей исторической территории, и это являлось весьма обнадеживающим фактом для решения армянского вопроса.

Однако положения договора не были реализованы. Эта проблема всегда находилась в центре нашей научной и исторической мысли. Данной проблеме было посвящено множество исследований, книг и статей, и сегодня, 100 лет спустя, делается попытка еще взглянуть на философию Севрского договора и

понять, причины , почему он так и не был реализован. Мы надеемся, что будет создана историческая ситуация, при которой эта проблема будет решена.

Anna Melkonyan

The Treaty of Sevres and the fate of the Armenian question. hopes and disappointments

Conclusion

Key words and expressions: *Treaty of Sevres, great powers, territorial claims, Kemal Turkey, articles on Armenia, V. Wilson's Arbitral Award, international law.*

About 100 years ago, a treaty was signed between the Turkish Sultanate and the Entente countries, where there was a reference to the Armenian question. Turkey recognized the independence of Armenia. According to this treaty, the President of the United States of America Woodrow Wilson was asked to draw the borders of the future independent Armenia. These borders were to pass within within the boundaries of Erzurum, Van, Bitlisi, Trabzon (Trebizond). However, Woodrow Wilson made an arbitration decision on the borders quite late, on November 22, 1920. However, the Treaty of Sevres never came into force. But one thing remained a fact: 875 years after the painful fall of Bagratid Armenia, as well as 545 years after the fall of the Cilician Kingdom, the right of the Armenian people to restore an independent state on the Armenian Highlands was recognized as invalid at the international level.

This was a phenomenon of great importance, since the right of the Armenian people to self-determination on their historical territory was recognized, and this was a very encouraging fact for the solution of the Armenian Question, but the provisions of the treaty were not implemented. This problem has always been at the center of our scientific and historical thought. There are many studies, books and articles devoted to this problem, and today, 100 years later, an attempt is being made to examine the philosophy of the Treaty of Sèvres and why it could not have been realized. We hope that a historical situation will be created in which this problem will be solved anyway.

Աննա Մելքոնյան – Երևանի Խ. Աբովյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց պատմություն, համաշխարհային պատմություն: annamel1984@mail.ru.

Анна Мелконян – г. Ереван, учитель истории в основной школе №2им. Х. Абовяна. Научные интересы: История Армении, всемирная история. annamel1984@mail.ru.

Anna Melkonyan – Yerevan, history teacher at Secondary School No. 2 named after Kh. Abovyan. Research interests: Armenian history, world history. annamel1984@mail.ru.

Խմբագրություն է ուղարկվել 01.12.2024թ.
Հանձնարարվել է գրախոսության 13.12.2024թ.
Հրապարակման է ներկայացվել 21.03.2025թ.